ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

Նախագիծ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«_____» «_____» 2024 թ. № ____ -Ն

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների

օրենսդրության (այսուհետ՝ Օրենսդրություն) խախտումների վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրությունը տրամադրելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

«____» _____ 2024 թ.

ք. Երևան

Հավելված N 1

Շրջակա միջավայրի նախարարի

2024 թ._____ « »-ի № ___ - Ն հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

_____ _____ «____» - ին _____-ին

տարի ամիս օր ժամ

Ես՝ _____
_____

_____
_____

պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, արձանագրության կազմման վայրը

կազմեցի իրավախախտման վերաբերյալ սույն արձանագրությունը «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի(ով)_____մասի(ով)_____կետի(ով)_____ենթ ակետով նախատեսված

_____
_____

կենդանատեսակի կամ բուսատեսակի անվանումը կամ այլ

պատճառված վնասի հիմքով։

1. Իրավախախտումը կատարելու վայրը
_____

անտառպետություն, անտառամաս, տեղամաս, պահաբաժին

2. Իրավախախտման վայրի տեղադիրքը

կոորդինատներ

Հ/Հ	X	Y
1		
2		
3		
4		

3. Իրավախախտման էությունը (նկարագիրը) _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Ում կողմից է հայտնաբերվել
իրավախախտումը_____

5. Իրավախախտ կազմակերպությունը կամ իրավախախտը_____

_____

կազմակերպության անվանումը, անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման հասցեն, անձը հաստատող փաստաթուղթ, պաշտոնը, հեռախոս, էլ. փոստ

6. Իրավախախտից վերցված գործիքների և նյութերի տեսակն ու քանակը և ում է ի պահ տրվել _____

_____

անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը

7. Իրավախախտի բացատրությունը _____

_____

_____

ստորագրությունը

8. Արձանագրությունը կազմելուն մասնակցած անձանց բացատրությունը _____

_____

_____

ստորագրությունը

9. Արձանագրությունը կազմողի ստորագրությունը _____

10. Արձանագրության օրինակը ստացա _____

_____

իրավախախտի ստորագրությունը, օր, ամիս, տարի

11. Արձանագրությունն ստանալուց և ստորագրելուց հրաժարվելու մասին նշում _____

_____

Հավելված N 2

Շրջակա միջավայրի նախարարի

2024 թ._____ « »-ի № ___ - Ն հրամանի

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության (այսուհետ՝ Օրենսդրություն) խախտումների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն) կազմվում է անմիջապես խախտման հայտնաբերման վայրում՝ 2 օրինակից։

2. Արձանագրության մեկ օրինակը տրամադրվում է իրավախախտին, իսկ մյուս օրինակը, արձանագրությունը ստացած լինելու վերաբերյալ իրավախախտի կողմից կատարված գրառմամբ, պահվում է տարածքային ստորաբաժանումում և գրանցվում համապատասխան մատյանում։ Իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրությունների հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը սահմանվում է էկոպարեկային ծառայության պետի (այսուհետ՝ Ծառայության պետ) հրամանով։

3. Իրավախախտում կատարած և արձանագրությունն ստորագրելուց և ստանալուց հրաժարված լինելու դեպքում, արձանագրություն կազմած համապատասխան ստորաբաժանումը 5-օրյա ժամկետում պատշաճ ծանուցմամբ իրավախախտին է ներկայացնում կազմված արձանագրության օրինակը։

4. Կազմված արձանագրության պատճենը, իսկ արձանագրությունն ստանալուց հրաժարված լինելու դեպքում՝ նաև իրավախախտին արձանագրությունը պատշաճ ծանուցմամբ առաքված լինելը հավաստող համապատասխան անդորրագրի պատճենը 5-օրյա ժամկետում ներկայացվում է Ծառայության պետին ։

5. Իրավախախտի անձը պարզված չլինելու դեպքում՝ տարածքային ստորաբաժանման կողմից ձեռնարկվում են միջոցներ՝ իրավախախտի անձը պարզելու ուղղությամբ, իսկ ձեռնարկված միջոցների արդյունքում իրավախախտի անձը պարզվելու դեպքում՝ 5-օրյա ժամկետում իրավախախտի վերաբերյալ տեղեկությունը ներկայացնում է Ծառայության պետին։

6. Էկոպարեկային ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ապահովում է իրավախախտման վերաբերյալ դեպքերի հաշվառումը և սահմանում հսկողություն՝ պատճառված վնասի հատուցման գործընթացի նկատմամբ։

7. Իրավախախտի կողմից արձանագրությունն ստանալուց հետո «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 10-օրյա ժամկետներում բանկային համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վնասի հատուցման գումարն ինքնակամ չվճարելու դեպքում, վնասի փոխհատուցման պահանջ ներկայացրած Ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից ձեռնարկվում են միջոցներ՝ գումարի վճարումը դատական կարգով ապահովելու նպատակով համապատասխան դատարանին հայցադիմում ներկայացնելու ուղղությամբ։